

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ
ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Լեզվի տարբեր բաղկացուցիչ մասերն ունեն իրենց զարգացման յուրահատկությունները՝ պայմանավորված լեզվի կառուցվածքի ու գործառնության մեջ կատարած դերով: Բառապաշարը, որն անմիջականորեն է արտացոլում հասարակական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը, շատ ավելի արագ է փոփոխվում, քան, ասենք, քերականական կառուցվածքը: Բառապաշարի զարգացման այս յուրահատկությունը, սակայն, չի տարածվում բառակազմական օրինաչափությունների վրա, որոնք զգալիորեն կայուն են:

Այնուամենայնիվ բառակազմական օրինաչափությունների կայունությունը բացարձակ չէ: Վերջին տասնամյակներում հայոց լեզվի բառակազմական օրինաչափություններում տեղի են ունեցել որոշ տեղաշարժեր, որոնք արժանի են ուշադրության որպես միտումներ: Այդ տեղաշարժերը, կառուցվածքային բնույթ ունենալով հանդերձ, պայմանավորված են լեզվի գործառնական աննախընթաց զարգացումով, որը նորանոր պահանջներ է առաջադրում լեզվի կառուցվածքին: Առհասարակ պետք է նկատի ունենալ, որ լեզվի երկու կողմերը՝ գործառնական և կառուցվածքային, սերտորեն կապված են իրար հետ, և մասնավորապես առաջինը՝ գործառնական զարգացումը, մեծապես նպաստում է կառուցվածքային զարգացմանը, հատկապես բառակազմական հնարավորությունների ծավալմանը:

Բառակազմության զարգացումը քննելիս անհրաժեշտ է նկատի ունենալ այն տեղաշարժերը, որոնք նկատվում են բառակազմության տեսակների, բաղադրյալ բառերի բաղադրիչների հարաբերության, բաղադրիչների բնույթի ու քանակի և նրանց կապակցման եղանակների ու միջոցների մեջ: Մեկ հոդվածում հնարավոր չէ հանգամանորեն քննել բառակազմական օրինաչափությունների զարգացման բոլոր կողմերը, ուստի կանգ կառնենք նրա առավել բնորոշ միտումների վրա:

Բառակազմական օրինաչափությունների տեղաշարժերը տարբեր են իրենց բնույթով և ընդգրկման ծավալով: Հայերենի բառակազմության զարգացման ներկա փուլի ամենաընդգրկուն և ընդհանուր միտումն այն է, որ լեզուն բառակազմության մեջ հենվում է հիմնականում կաղապարային եղանակի վրա: Ի՞նչ նկատի ունենք կաղապարային եղանակ ասելով, և ինչի՞նչ է այն հակադրվում:

Հայոց լեզվի զարգացման արդի փուլում բառապաշարի հարստացման գործում շատ փոքր դեր են կատարում բառակազմական այնպիսի տիպեր, ինչպիսիք են՝ ա) խռմբ-խռմբ, ուշ-ուշ, բ) մեկ առ մեկ, ժամանակ առ ժամանակ, մերք ընդ մերք, գ) աչ ու ձախ, չոր ու ցամաք, դ) ման գալ, գլխի ընկնել, մինչև անգամ, այնպես որ, ե) տանտեք, մայրցամաք, առևտուր, անուղղոք, բարբառ, կսկիծ և այլն: Բառապաշարի հարստացման գործում աննշան դեր է կատարում նաև բառի քերականական ձևից նոր բառի առաջացման երևույթը

(հմմտ., օրինակ, նորից, շուտով մակբայների առաջացումը նորից, շուտով հոլովածներին): Այս բոլոր տիպերի մեջ ընդհանուրն այն է, որ դրանց հիմքում ընկած է փոխանցումը, որպես բառական նոր միավորի առաջացման եղանակ: Փոխանցումը նշված տարբեր տիպերում տարբեր բնույթ է կրում: Հիմնական տարբերությունն այն է, որ մի դեպքում բառերի կապակցությունն է վերածվում բառի (ինչպես՝ տան տեր→տանտեր, մայր ցամաք→մայրցամաք և այլն), մյուս դեպքում՝ մեկ բառի քերականական ձևը (ինչպես՝ նորից): Այլ կարգի տարբերություններն այստեղ նկատի չենք ունենում: Քննարկվող հարցի տեսակետից կարևորը դրանց միջև եղած ընդհանրությունն է, այն, որ համապատասխան լեզվական միավորները (բառերի կապակցություն կամ բառի քերականական ձև) ժամանակի ընթացքում, առանց բառակազմական լրացուցիչ բաղադրիչի, իմաստային ու շարահյուսական հիմքի վրա վերածվում են բառական մեկ միավորի՝ մեկ բառի:

Բառապաշարի հարստացման այս եղանակը, որ մենք կոչում ենք փոխանցումային եղանակ, անցյալում ևս ավելի փոքր կշիռ է ունեցել, քան կաղապարային եղանակը, որի մասին կիսովի ստորև: Նշված կազմություններից ամենաարգելանքներ հարադրություններն են, մանավանդ բայական հարադրությունները, որոնց քանակը հազարների է հասնում: Ինչ վերաբերում է այդ կազմությունների այժմյան վիճակին, ապա դրանք մեծ չափով սահմանափակել են իրենց աճը:

Բառակազմության մյուս տեսակները կոչում ենք կաղապարային, նկատի ունենալով, որ սրանց դեպքում բառը ցանկացած պահին կարելի է կազմել արդեն իսկ առկա կաղապարով:

Կաղապարային կազմություններ են՝ ա) համադրական բարդությունները (բացի կցականներից). օրինակ՝ տիեզերանավ, հեռուստացույց, հրթիռատար, ականակիր, հեռախոսավար, ծանրամարտ, ակնոց, մեկնարկ, ռադիոտուն և այլն. բ) կիսահարադրական տարահիմք բարդությունները. օրինակ՝ տուն-բանգարան, ցուցահանդես-վաճառք, գրադարան-ընթերցարան, կիլովատ-ժամ, լիտր-վալեյան և այլն. գ) ածանցավոր բառերը. օրինակ՝ ապակեներոնացում, գերկարճ, մրցույթ, պարապուրդ, դանուկորդ, համալիր, մակնիշ և այլն:

Բառակազմական երկրորդ ուղին, որ միշտ էլ ակտիվ է եղել, գնալով ավելի է սկսում դեռ կատարում, և ընդհակառակն, առաջին՝ փոխանցումային եղանակը ավելի է սահմանափակում իր հնարավորությունները: Ո՞րն է դրա պատճառը:

Քաղաքակիրթ լեզուների արդի շրջանը, որոշ պայմանականությամբ, կարելի է համարել լեզուների գիտականացման շրջան՝ նկատի ունենալով իրար հետ կապված երկու հանգամանք՝ ա) ակտիվ գիտական ներգործությունը լեզուների զարգացման վրա, առավելապես բառակազմության բնագավառում. բ) գիտության, տեխնիկայի, հասարակական կյանքի աննախընթաց զուրգացման պայմաններում նորակազմ բառերի մեջ տերմինների ու տերմինային բառերի գերշիջող վիճակը: Այսպիսի պայմաններում բառ և հատկապես տերմին կազմելը դառնում է անհետաձգելի անհրաժեշտություն, օրվա պահանջ:

Մարդու ակտիվ ներգործության տեսակետից բառակազմության նշված երկու ուղիները (փոխանցումային և կաղապարային) տարբեր վիճակ են ներկայացնում: Փոխանցումային եղանակը գործում է շատ դանդաղ, այն հա-

մարյա դուրս է մարդու ակտիվ ներգործության ոլորտից: Մինչդեռ կադապարային եղանակը լայն հնարավորություն է տալիս ցանկացած պահին կազմելու ցանկացած բառը: Ահա թե ինչու հայերենի (և ոչ միայն հայերենի) զարգացման արդի փուլում բառակազմության նշված եղանակներից ավելի է ակտիվանում երկրորդը՝ կադապարայինը: Գրական հայերենի արդի փուլում բազմահազար նորակազմությունները ձևավորվում են կադապարային եղանակով:

Նոր հասկացություններ, իմաստներ արտահայտելու անհրաժեշտությունն այնքան մեծ է, որ առաջ է բերում ոչ միայն եղած բառակազմական կադապարների ծավալում, այլև նոր կադապարների առաջացումը: Ինչպես հայտնի է, հայերենի իսկական բարդության բնորոշ գիծ է այն, որ նրա բաղադրիչները կապված են ստորադասական հարաբերությամբ: Մինչև վերջին շրջանը հայերենում հայտնի էին համադաս բաղադրիչներով սակավաթիվ բարդ բառեր՝ նույնահիմք (մեծամեծ, շարաշար և այլն) և տարահիմք (տխրադալով, վայելալազել և այլն): Համադասական հարաբերությունն այնքան անսովոր է հայերենի համադրական բարդություններին, որ որոշ ուսումնասիրողներ նույնարմատ իսկական բարդությունները համարել են անխեղձան¹:

Վերջին տասնամյակներում հայոց լեզվում զարգացավ համադաս բաղադրիչներով բարդության տեսակ, որով սովորաբար արտահայտվում է գիտական, տեխնիկական, հրապարակախոսական բաղադրյալ տերմինների, արտահայտությունների ածական բաղադրիչը: Օր.՝ (Ա) կուսակցական-կառավարական (պատվիրակություն), (Բ) գիտատեխնիկական² (հեղափոխություն): Համադաս բաղադրիչներով ածական կազմելը անցյալում էլ խորթ չի եղել հայերենին (հմմտ. առևտրավառխառուական, բանվորագյուղացիական), բայց այս կազմությունները հայերենում (և ոչ միայն հայերենում) մեծ թափ ստացան հատկապես վերջին տասնամյակներում, և կարճ ժամանակում այդ եղանակով կազմվեցին ու կազմվում են մեծ քանակությամբ ածականներ³: Այսպիսի բարդ ածականներն իմաստը ձևավորվում է բաղադրիչ համադր ածականների միավորումից: Բերված (Ա) և (Բ) կառույցների տարբերությունները հանդես են գալիս առաջին հիմքի ձևային հատկանիշի և հաջորդ հիմքին միանալու եղանակի մեջ: (Ա) դեպքում առաջին հիմքը ածականի ամբողջական ձևն է, որը հաջորդ բաղադրիչին միանում է հարադրության եղանակով (գրություն մեջ՝ գծիկով): Օր.՝ մարտիստական-լենինյան, ազգային-ազատագրա-

¹ Բացի հոգակապով կապակցված լինելուց, որն անիսկական բարդություններին հատուկ է, մեծամեծ, շարաշար և նման բարդություններում կա նաև իմաստային որոշակի յուրահատկություն, որով այդ կազմությունները տարբերվում են սովորական կրկնավորներից: Այլ են մի կողմից՝ մեծ-մեծ, շար-շար, մյուս կողմից՝ մեծամեծ, շարաշար, որոնք տարբերվում են թե՛ բառակազմական նշանակությամբ, թե՛ բառական իմաստով (հմմտ., օրինակ, Աննան ուներ բարձր ու բարեկազմ հասակ, մեծ-մեծ սևորակ աչքեր (Մուրացան): Հայր-Մարգարեին ճանաչում էին պարսից արքունիքում ինչպես մեծամեծները, այնպես էլ զորավարներից շատերը (Ս. Զորյան):

² Այսպիսի կառույցները որպես համադրական ճանաչվեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի առընթեր տերմինաբանական կոմիտեի 1976 թ. ապրիլի «Գծիկի գործածության մասին» որոշումով:

³ Հմմտ. է. Բ. Աղայանի ուսումնասիրությունը՝ Գ. Բ. Ջահուկյան, է. Բ. Աղայան, Վ. Գ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու (I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 402—408) գրքում:

կան, հասարակական-ֆաղափական, գրական-գեղարվեստական, գրական-երաժշտական, էլեկտրոնային-հաշվողական, նախագծային-կոնստրուկտորական, նվագական-փաղափշական, անասնաբուժական-անասնապահական և այլն:

(Բ) խմբի կազմությունների առաջին հիմքը հանդես է դալիս զեղչումով. սովորաբար զեղչվում է ածականի ածանցը, և այդպիսի հիմքը հաջորդ հիմքին միանում է հոդակապով՝ կազմելով զեղչումով համադրական բարդ ածականներ, որոնց քանակը շատ ավելի մեծ է, քան նախորդներինը. գիտագործական, գիտահանրամատչելի, գաղափարադաստիարակչական, դրամախրային, մանկապատանեկան, լեզվագրական, լեզվսոցական, հոդակլիմայական, հրթրամիջուկային, առևտրաֆինանսական, լեզվատառամային, հպաշխական, նկարադասարարական, մաշկավեներական, ստամոքսաղիքային (կա նաև սնդեստամոքսային), ֆիզիկամաթեմատիկական և այլն:

Համադասական կազմությամբ ածականների հիշյալ երկու խմբերի (հարադրական ու համադրական) միջև անանցանելի սահման չկա. շատ հաճախ հարադրականները վերածվում են համադրականի, և այս առումով համադրական կազմությունները որոշ վերապահությամբ կարելի է համարել համադրականների զարգացման հաջորդ աստիճանը: Հմմտ. գաղափարական-դաստիարակչական→գաղափարադաստիարակչական, գիտական-կազմակերպչական→գիտակազմակերպչական, նախագծային-կոնստրուկտորական→նախագծակոնստրուկտորական և այլն:

Համադասական հարաբերությամբ ածականները հայերենում առաջացել են ուսաց լեզվի համապատասխան կազմությունների նմանակությամբ. հմմտ. научно-практический, идейно-воспитательный, учебно-методический, денежно-вещевой: Սակայն հայերեն կազմությունները հանդես են բերում մի շարք էական յուրահատկությունների: Ի տարբերություն ռուսերենի, որի նշված կազմությունները հարադրական բնույթի են, հայերենի կազմությունները, ինչպես տեսանք, և՛ հարադրական են, և՛ համադրական: Հարադրական կազմության առաջին բաղադրիչը, ի տարբերություն ռուսերենի, հանդես է դալիս ածականական ամբողջական կազմով (հմմտ. национально-освободительный ազգային-ազատագրական): Ի տարբերություն ռուսերենի, հայերենում համադասական հարաբերությամբ ածականների մեծ մասը, որոնցում առաջին բաղադրիչը հանդես է դալիս զեղչումով, համադրական կազմություն է: Վերջապես, առանձին դեպքերում առաջին բաղադրիչում կարող է զեղչվել ոչ միայն ածականական ածանցը, այլև ուրիշ բաղադրիչ. ինչպես՝ շինմոնտաժային, ֆաղդաստիարակչական:

Խոսելով այն մասին, որ համադրական կազմության վերջին բաղադրիչի ածանցը վերաբերում է նաև առաջինին, պետք է նկատի ունենալ, որ դա չի նշանակում, թե առաջին բաղադրիչը ևս ունենում է նույն ածանցը, և վերջինս պարզապես զեղչվում է: Այստեղ կարևորը ոչ թե ածանցների նույնությունն է, այլ նրանց իմաստների ընդհանրությունը: Հմմտ. դրամախրային (դրամական և իրային), գիտահանրամատչելի (գիտական և հանրամատչելի), հոդակլիմայական (հոդային և կլիմայական) և այլն:

Համադասական հարաբերությամբ համադրական ածականների սահմանները և բաղադրիչների հարաբերությունը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է նրանցից տարբերել արտաքուստ նրանց նման, բայց ըստ էության այլ կազ-

մոլթյուն ունեցող հետևյալ ածանցավոր ածականները. ա) ածանցավոր ածականներ, որոնք կազմված են «բաղադրյալ հիմք+ածանց» կաղապարով. ինչպես՝ ագրոնոմիական (←սղորոնոմիա+ական՝ «ագրոնոմիային վերաբերող՝ հատուկ», ո՛չ՝ ագրոնոմիական+քիմիական), էլեկտրամագնիսական (←էլեկտրամագնիս+ական, ո՛չ՝ էլեկտրական+մագնիսական), ջերմաէլեկտրոնային (←ջերմաէլեկտրոն+ային), ջերմատեխնիկական (←ջերմատեխնիկա+ական) և այլն: Այս ածականների հիմքի առաջին բաղադրիչի ածականական ածանցը նույնպես ղեղաված է, բայց դա կապված է որպես հիմք գործածվող գոյականի (օր. ջերմատեխնիկա) և ոչ թե ամբողջ ածականի հետ: Բ) Ածանցավոր ածականներ, որոնց հիմքի դերով հանդես են գալիս սոսկականի ու գոյականի կապակցությունները. ինչպես՝ անտառաբուսական (←անտառային արդյունաբերություն+ական՝ «անտառային արդյունաբերությանը վերաբերող՝ հատուկ», ո՛չ՝ անտառային+արդյունաբերական կամ անտառային արդյունաբերական), ժողովրդատնտեսական (←ժողովրդական տնտեսություն+ական), արևելաօդակայան (←Արևելյան օդակայան+ական), արևմտագերմանական (←Արևմտյան Գերմանիա+ական), լատինամերիկյան (←լատինական Ամերիկա+յան) և այլն: Սրանք բաղադրիչների հարաբերության տեսակետից համանման են այնպիսի ածականների, որոնց առաջին հիմքի ածականը պարզ է. ինչպես՝ խաղաղօվկիանոսյան (←խաղաղ օվկիանոս+յան):

Հայերենում զարգանում է համադաս բաղադրիչներով բարդության մի այլ տեսակ ևս. ինչպես՝ աղբյուր-հուշարձան, վագոն-ռեստորան, մսուր-մանկապարտեզ, բաղնիք-վազֆատուռ և այլն: Առանձին դեպքերում հարաբերության տեսակետից կարող է առավել կարևոր թվալ բաղադրիչներից մեկը կամ մյուսը: Այսպես, ցուցաբերող-վանառք բառի մեջ նպատակային, փաստական առումով կարող է համեմատաբար առաջնային լինել (կամ թվալ) նշանակյալի կամ ցուցահանդեսային, կամ վաճառման կողմը: Բայց դա վերաբերում է բառի գործածության իրադրական կողմին և ոչ թե բաղադրիչների հարաբերությանը, որն այս և նման դեպքերում համադասական է: Ի դեպ, քննարկվող կազմություններում համադասական հարաբերության ձևավորմանը նպաստում է բաղադրիչ գոյականների կապակցումը հարադրման սկզբունքով: Այս տեսակետից ուշադրության արժանի է հետևյալ երևույթը: Եթե պատկերացնելու լինենք այս բաղադրիչները իսկական բարդության սկզբունքով կապակցված և հատկապես հոդակապով կապված, ապա այդ դեպքում՝ դրանք, իրոք որ, կհակվեն դեպի ստորադասական կապակցություն, այսինքն՝ բաղադրիչների հարաբերությունը կփոխվեր: Այսպես, եթե պատկերացնելու լինենք բաղնիքավազֆատուռ կազմությունը, ապա այն կարող էր նշանակել, ասենք՝ «բաղնիքի վազֆատուռ», «բաղնիքային վազֆատուռ»: Բայց այդ դեպքում մենք կունենայինք այլ բառ, որը ցույց կտար այլ նշանակյալ, քան բաղնիքավազֆատուռ-ը, որի նշանակյալը թե՛ բաղնիք է, թե՛ վազֆատուռ: Սակայն այսպիսի բարդությունների բաղադրիչներն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն դառնա որոշիչի ու որոշյալի կապակցություն, ուրեմն և չեն միանա հոդակապով: Սա միաժամանակ ցույց է տալիս, որ բարդության ու նրա բաղադրիչների հարաբերության բնույթի և նրա կապակցման միջոցների միջև կա որոշակի կապ:

Համադասական հարաբերությամբ բարդությունների մասին ասվածից

կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը: Լեզուն, կարիք ունենալով համադաս հարաբերությանը նոր կազմությունների, տարբեր խոսքի մասերի համակարգում այդ հարցը լուծում է տարբեր կերպ. ածական կազմում է ածականներից իսկական բարդության ձևավորման սկզբունքով՝ գործածելով հոգսկապ և կիրառելով հարմարեցման⁴ սկզբունքը, իսկ գոյական կազմում է գոյականներից համադրման սկզբունքով՝ պահպանելով բաղադրիչների ամբողջական կազմը:

Ժամանակակից հայերենի բառակազմության մեջ կատարված տեղաշարժերից է բազմարմատ⁵ բառերի կազմությունը և համեմատաբար կարճ ժամանակում տարածվելը⁶: Եթե անցյալում այդպիսի կազմությունը հազվադեպ երևույթ էր, ապա հայոց լեզվի զարգացման արդի փուլում այն դարձել է օրինաչափական ու վերածվել բառակազմության զարգացման միտումի: Բազմարմատ բարդությունների մեջ հատկապես շատ են եռարմատ բարդ բառերը: Օրինակ՝ ավտոբեռնաթափում, զազատուրբինաֆարշ, էլեկտրաֆարշավար, ինֆաբեռնաթափ, կինոհանդիսատես, հացահատիկահավաք, միկրոպատեն-նանոս, ուղիոհեռադիտակ, ջերմաէլեկտրակայան և այլն: Եռարմատ բարդություններն այնքան են սովորական դարձել, որ նույնիսկ հանդես են գալիս նոր կազմություններում որպես քառարմատ բարդ բառերի հիմք: Օրինակ՝ ավտոբեռնափոխադրում, կինոլուսանկարահանում, ուղիոհեռուստակառավարում, խողովակաէլեկտրաեռակցում և այլն: Ինչ խոսք, դրանով մեծանում է բարդ բառերի ծավալը: Սակայն այս հանգամանքը չի հակասում լեզվի մեջ գործող խնայողության ընդհանուր օրենքին, քանի որ բառի ծավալը մեկ բաղադրիչով մեծացնելով՝ լեզուն ավելի մեծ խնայողության է հասնում խոսքի մեջ. դա հնարավորություն է տալիս խոսքի մեջ խնայել մեկ բառ կամ բառակապակցություն: Հմտ. կինոհանդիսատես և կինոյի հանդիսատես, ուղիոհեռախոս և ուղիոսլիֆների միջոցով գործող հեռախոս: Այսուհանդերձ լեզուն ըստ հընարավորին խոսափում է երկարաշունչ բառերից և այդպիսիք, այն էլ միայն տերմիններ, կազմում է խիստ անհրաժեշտության դեպքում:

Բազմարմատ բառի հիմքերի հարաբերությունը հիմնականում այնպիսին է, ինչ որ երկարմատինը: Բազմարմատ բառը երկարմատի պես սովորաբար կազմվում է երկու հիմքից, որոնք, որպես անմիջական բաղադրիչներ, ձևավորում են տվյալ բարդությունը: Տարբերությունը հիմնականում բաղադրիչների կազմության մեջ է. որպես հիմք արդեն հանդես են գալիս բարդ բառեր: Եռարմատ բառերի հիմքերից մեկը լինում է բարդ: Օրինակ՝ լուս+ա+հեռագիր, միկրո+էմալապատում, էլեկտր+ա+ժամացույց, էլեկտրաֆարշ+ա+վար և այլն:

Քառարմատ բառերը կազմվում են տարբեր սկզբունքներով: Ամենասո-

⁴ Համարեցում տերմինը մենք այստեղ գործածում ենք լայն առումով:

⁵ Բազմարմատ ասելով նկատի ունենք արմատների երկուսից ավելի լինելը. արմատի հետ կարող է գործածվել կամ չգործածվել ածանց. ինչպես՝ էլեկտր+ա+սրտ+ա+գր+ու-թյուն), [ըր+ա+(գեդ+ակ)]+ա+խաղ, (հեռ+ուստ)+ա+[հառ+ա+(վար+ուս)]:

⁶ Երևույթը դիտված է որոշ ուսումնասիրողների կողմից. տե՛ս, օրինակ, И. К. Кусикян, Изменения в словарном составе литературного армянского языка советского периода. М., 1964, стр. 34 и сл.; Հ. Ա. Օհանյան, Բառապաշարի հարստացումը բառաբարդման միջոցով (Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973, էջ 58—61) և այլն:

վորական եղանակն այն է, որ բարդ բառի վրա աստիճանաբար ավելանում են նոր արմատական բաղադրիչներ: Քառարմատ բառերի անմիջական բաղադրիչներից միարմատը մեծ մասամբ լինում է առաջինը, իսկ եռարմատը՝ երկրորդ բաղադրիչ: Օրինակ՝ հեռուստակառավարում—ռադիո+հեռուստակառավարում, լուսանկարահանում—հեռուստ+ա+լուսանկարահանում: Ավելի քիչ են այն դեպքերը, երբ անմիջական բաղադրիչներից միարմատն ավելանում է վերջից. ինչպես՝ հեռագրասյուն—հեռագրասյուն+ա+շառ: Պատահում է նաև, որ քառարմատ բարդ բառը կազմվում է երկու երկարմատ անմիջական բաղադրիչներից. ինչպես՝ հացահատիկ+ա+մթերակայան:

Ոչ միշտ է, սակայն, բազմարմատ բառը կազմվում նշված և արդեն օրինաչափական դարձած եղանակներով: Վերջին շրջանում հանդես են գալիս նոր բազմաբաղադրիչ կազմութուններ, որոնք իրենց հետ բերում են կառուցվածքային նորութուն: Այսպես, դիմաքվածամանկանիչ բարդ բառի մեջ, շարահյուսական տերմինով ասած, գոյություն ունի բաղադրիչների համաստորդասական հարաբերություն. այն նշանակում է «դեմք, թիվ, ժամանակ նշող», կամ այլ կերպ՝ «դիմանիշ, թվանիշ, ժամանականիշ», ուր նիշը միավորվել է որպես ընդհանուր բաղադրիչ: Այսպիսի կառուցվածք ունի նաև այգեպտղաբանջարաբույծ քառարմատ բառը: Այս փաստերը ցույց են տալիս, որ բազմարմատ բառերի հանդես գալը իր հետ բերում է անմիջական բաղադրիչների հիմքերի նոր հարաբերություններ: Այսպիսով, գնալով ավելանում է բարդ բառերի արմատական բաղադրիչների քանակը, և դա ազդում է ամենից առաջ հիմքերի կազմության ու բնույթի, մասամբ նաև՝ բաղադրիչների հարաբերության վրա:

Բերված կազմութունների քննությունը թույլ է տալիս անել հետևյալ ընդհանրացումը. բազմարմատ ու երկարմատ բարդ բառերի միջև կա մոտավորապես այն հարաբերությունը, ինչ որ բազմաբաղադրիչ ու երկբաղադրիչ բարդ նախադասությունների միջև: Դրանք, թեկուզ սակավաթիվ, բայց և այնպես նոր բառեր են, որոնք մի նոր կողմից հաստատում են լեզվի կառուցվածքի մեջ մոնիզմի սկզբունքի տեսության ճշտությունը, որ զարգացրել է ակադեմիկոս Գ. Զահուկյանը⁷: Բարդ բառերի զարգացման միտումը տանում է դեպի այդ հնարավորությունների ավելի լայն իրացում:

Բազմարմատ բառերի բաղադրիչների քանակը տեսականորեն չի կարելի սահմանափակել, բայց լեզուն խուսափում է շատ երկարաշունչ բառերից, որոնք թե՛ արտասանական և թե՛ ընկալման տեսակետից ցանկալի չեն լեզվի համար: Լեզուն միշտ հոգ է տանում իր նկատմամբ նաև զեղազիտական առումով: Այս հանգամանքը, զուգակցվելով լեզվի մեջ մշտապես գործող խնայողության օրենքի հետ, իբրև արդյունք տվել է մի երևույթ, որը կարելի է կոչել պայմանականություն:

Նկատի ունենք հետևյալ երևույթը: Սովորաբար բաղադրյալ բառը սկզբնապես ունենում է իր որոշակի ներքին ձևը, որը համապատասխանում է նրա բառակազմական նշանակությանը: Լեզվի պատմական զարգացման ընթացքում թե՛ ներքին ձևը և թե՛ բառի ունեցած բառակազմական նշանակությունը կարող են մթափանցել: Դա տեսնում ենք նախադասություն, նախագահ, սեփա-

⁷ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

կան, հեմարան և շատ այլ բառերում: Նման դեպքերում բառի կազմությունը կամ նրա այս կամ այն բաղադրիչը տվյալ իմաստի արտահայտման համար դառնում է պայմանական: Լեզուների, այդ թվում նաև հայերենի, զարգացման արդի փուլում նկատելի է պայմանականությանն զգալի տեղ տալը բառի կազմության հենց սկզբում: Իհարկե, այսպիսի պայմանականությունն այլ բլնություն և ընդգրկում ունի, քան վերը նշվածը: Այսպես, բառը հաճախ ընդգրկում է իմաստային շատ բաղադրիչներ, բայց ոչ բոլոր բաղադրիչներն են արտահայտվում բարդ բառի կազմության մեջ. վերջինիս մեջ արտահայտվում է իմաստի ամենաբնորոշ ներկայացուցիչը, իսկ մյուսները պետք է հասկացվեն: Նշենք, որ սա վերաբերում է հատկապես տերմինաբանությանը: Տերմինի ճշգրիտ իմաստը նման դեպքում հասկացվել չի կարող բառի կազմության հիման վրա: Այն որոշվում է նախապես և այսպես էլ պետք է ճանաչվի: Այսպես, ալյուսագործ, պանրագործ բառերի մեջ գործ-ը նշանակում է «պատրաստող», իսկ բառի հիմքը ցույց է տալիս այդ գործողության օբյեկտը (ալյուս, պանիր): Մինչդեռ ֆիմիագործ բառը բառակազմական այլ նշանակություն ունի. ալն նշանակում է «քիմիական արդյունաբերության բնագավառում աշխատող», ուրեմն «քիմիական արդյունաբերության բնագավառում» բառակապակցության իմաստն այս կազմության մեջ արտահայտվում է միայն ֆիմիա- հիմքով:

Ռադիոաստղագիտություն տերմինն անվանումն է աստղագիտության մի ճյուղի, որը երկնային մարմիններն ուսումնասիրում է նրանց արձակած ռադիոալիքների ճառագայթումների դիտարկումների հիման վրա: Ուրեմն ռադիոբաղադրիչը ներկայացուցիչն է շուրջ տասը բառից բաղկացած մի ծավալուն հասկացության. «Երկնային մարմինների արձակած ռադիոալիքների ճառագայթումների դիտարկումների հիման վրա հետազոտություններ կատարող աստղագիտություն»:

Բերենք մի քանի փաստեր ևս, որոնցում բառակազմական մեկ բաղադրիչը բաղմաբաղադրիչ բառի կամ բառերի կապակցության իմաստ է արտահայտում. հեռուստակայան (հեռուստատեսային հաղորդումների կայան), հեռուստախցիկ (հեռուստակառավարման խցիկ), ավիապայքար (գյուղատնտեսական վնասատուների դեմ ավիացիայի միջոցով մղվող պայքար), անտառարդյունաբերություն (անտառային արդյունաբերություն), ծնողություն (ծնողական կոմիտե):

Բառակազմության մեջ բաղադրիչի զեղչումը նոր երևույթ է. հիշենք, օրինակ, թագուհի բառը, որի ամբողջական ձևը կլինեք թագավորուհի (հմմտ. բանվորուհի):

Հայոց լեզվի զարգացման արդի փուլում խոսքը վերաբերում է ոչ թե առանձին բառերի ածանցի զեղչմանը, այլ մեծ չափի պայմանականություններին և դրանց լայն տարածմանը, ինչպես երևում է վերոհիշյալ փաստերից:

Բառակազմության մեջ պայմանականությունը գնալով այնքան է մեծանում, որ երբեմն բարդ բառը շփոթում են հապավման հետ, կարծելով, թե ամբողջական բաղադրիչի (բաղադրիչների) կամ բաղադրիչի մի մասի զեղչումը հատուկ է միայն հապավմանը:

Պայմանականությունն ավելի մեծ չափերով հանդես է գալիս հապավումների մեջ: Նշենք, որ առհասարակ հապավումը ինքն իր կազմության հիմունքով պայմանական է: Ուրեմն, եթե խոսվում է այն մասին, որ կա զեղչումով

Հապավում, ապա դա պետք է հասկանալ միայն այն առումով, որ խոսքը վերաբերում է կրկնակի զեղչմանը, ինքնատիպ զեղչմանը, որով այժմ ավելի է պայմանական դառնում առանց այն էլ իր կազմության հիմունքով պայմանական հապավումը: Այսպես, աշխոթ բառը, որ ձևային տեսակետից կազմված է «աշխատանքային օր» կապակցության հապավումից, իրականում նշանակում է «մեկ աշխատանքային օրվա համար սահմանված աշխատանքի ծավալը կոտորետային»։ Գլավլիտ հապավումը պայմանականորեն ներկայացնում է Главное управление по делам литературы и издательств «Պատկերային անվանումը: Այն այժմ ավելի է դարձել պայմանական, քանի որ փոխվել է կազմակերպության պաշտոնական անվանումը (Главное управление по охране военных и государственных тайн в печати), իսկ հապավումը (գլավլիտ) մնացել է նույնը:

Այսպիսի պայմանականությունները, որոնք առաջանում են բազմաբառ անվանումների բաղադրիչների մի մասը, իսկ երբեմն մեծ մասը զեղչելու հետևանքով, այն բանի հետևանքն են, որ մեր ժամանակներում շատ հասկացություններ արտահայտվում են բազմաբառ կապակցություններով, և այժմ մարդը կարողանում է ավելի շատ ներգործել լեզվի վրա, ավելի շատ «միջամտել նրա ներքին գործերին», քան երբեք:

Ի՞նչ հարաբերության մեջ են հապավումները լեզվի և մասնավորապես նրա բառապաշարի հարստացման նկատմամբ: Այս հարցի վրա արժե հատուկ ուշադրություն դարձնել՝ հաշվի առնելով հապավումների կազմության պայմանականությունը և հարաբերությունն այն բառակապակցության (կամ բաղադրյալ անվան) նկատմամբ, որի հիման վրա և որից ձևավորվում է հապավումը: Լեզվի հարստացման տեսակետից հապավումները զգալիորեն տարբեր են բառաբարդումից ու բառածանցումից: Ամեն մի նոր կազմված բարդ կամ ածանցավոր բառ հարստացնում է լեզուն, ունի արտալեզվական որոշակի վերաբերություն, հանձն այն նշանակյալի, որի արտահայտման համար կազմվում է: Այլ է հապավումը իր կազմության հիմունքով: Որպես կանոն, հապավումը չենք կազմում նոր հասկացություն արտահայտելու նպատակով. այն կազմում ենք (այո՛ւ, կազմում ենք, և ոչ թե կազմվում է) արտահայտական միջոցների խնայողության նպատակով, որպես բազմաբառ բառակապակցության կամ բաղադրյալ անվան իմաստ արտահայտող ծավալային նվազագույն տարրերակ: Սովորաբար հապավման իմաստը մեզ համար հասկանալի է լինում այն բաղադրյալի միջոցով, որի հապավումն է ինքը: Այսպես, ՍՍՀՄ-ը, որպես հապավում, նոր հասկացություն չէ մեզ համար, նոր հասկացություն է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, ԳԱ-ն, որպես հապավում, ինքնուրույն հասկացություն չէ, հասկացությունը գիտությունների ակադեմիա-ն է: Այնպես որ մեր ճանաչողությունը հարստանում է ոչ թե ՍՍՀՄ, ԳԱ հապավումներով, այլ այն բաղադրյալ անվանումներով, որոնց հապավված ձևերն են դրանք: Այդ հապավումներով մենք արտահայտում ենք նշված բազմաբառ հասկացությունները. հապավումները դրանց արտահայտման խնայողական միջոց են:

Գործածության շնորհիվ (մանավանդ տեական գործածության) շատ հապավումներ ձեռք են բերում ինքնուրույն բառի նշանակություն, վերածվում են բառական միավորի: Բառական արժեքի տեսակետից ժամանակակից հայերենի հապավումները կարելի է բաժանել երկու խմբի.

ա) Հապավումներ, որոնք գործածվում են գրավոր խոսքում, լեզվի համար ինքնուրույն բառական արժեք չունեն և միայն գրության մեջ են հանգես գալիս որպես ծավալուն բառակապակցության կամ բաղադրյալ անվան սեղմ տարբերակ: Այդպիսիք են՝ ԳՍՄԿ (Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցություն), ԼՄԲԿ (Լեհաստանի միացյալ բանվորական կուսակցություն), ՎԴՀ (Վիետնամի Դեմոկրատական Հանրապետություն), ՆԳՄ (ներքին գործերի մինիստրություն), ԺՎԿ (ժողովրդական վերահսկողության կոմիտե), ԿՎՎ (կենտրոնական վիճակագրական վարչություն) և այլն: Այս խմբի մեջ են մտնում, այսպես կոչված, ներքին գործածության (ներքին գործավարության սահմաններում գործածվող) որոշ հապավումներ, ինչպես՝ միսկաթարդմիճ (մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության մինիստրություն), ջուրտնամիճ⁸ (մեխիորացիայի և ջրային տնտեսության մինիստրություն) և այլն:

բ) Հապավումներ, որոնք ստացել են ինքնուրույն բառի արժեք և գործածվում են որպես բառական միավոր: Այդպիսիք են՝ բուն, զագս, զլավլիտ, նէպ, ՏԱՍՍ, ՆԱՏՕ, Կենտկոմ, տեղկոմ, ֆաղկոմ, կուսբյուրո, կոմիկոմերեն, պարտուս, սոցապ, ժողրթբթավար, աշխղեկ, արսպործմիմիստրություն և այլն:

Ի՞նչն է նպաստում այս հապավումների ինքնուրույն բառական միավոր դառնալուն: Այդպիսի պայմաններ կսրելի է համարել հապավման՝ ա) գյուրահունչ (ուրեմն և դյուրընկալ) լինելը, որի համար կարևոր հատկանիշ է ձայնավորի առկայությունը և վերջինիս ու բաղաձայնների ներդաշնակ հարաբերությունը, բ) հաղորդակցական դերի կարևորությունը, որ դրսևորվում է նրա տարածվածությամբ ու հաճախական գործածությամբ: Տառային հապավումների վերաբերյալ կարելի է նշել նաև հետևյալ հանգամանքը: Վերոհիշյալ տառային հապավումներից միայն մեկը հայկական կազմություն ունի (բուն), մյուսները (զագս, նէպ, ՏԱՍՍ, ՆԱՏՕ) փոխառյալ են: Փոխառյալ հապավումների կազմության հիմքը հանդիսացող բառակապակցությունները հայերենում բոլորովին չեն գործածվում, և հիշյալ հապավումները մնում են համապատասխան անվանումների միակ ձևերը հայերենում, ուստի և տարածվում են որպես ինքնուրույն բառեր: Ըստ որում, որքան հապավման կապը խզվում է համապատասխան կապակցությունից, այնքան ավելի է դա նպաստում հապավման ինքնուրույնությանը (հմտ. ՆԱՏՕ—North Atlantic Treaty Organization, ՏԱՍՍ—Телеграфное агентство Советского Союза):

Այսպիսով, պայմանականության սկզբունքը տարբեր ընդգրկումով ու բնույթով գործում է բարդ ու ածանցավոր շատ բառերում և հատկապես հապավումների կազմության մեջ: Տարբերություններով հանդերձ, երկու դեպքում էլ պայմանականությունը լեզվի մեջ գործող խնայողության օրենքի մի դրսևորում է՝ պայմանավորված արտալեզվական հանգամանքներով ու լեզվի զարգացման ներկա փուլի յուրահատկություններով ու պահանջով: Խնայողության հետ միասին պայմանականության սկզբունքը նպաստում է (հատկապես բարդ և ածանցավոր բառերի կազմության մեջ, տե՛ս վերը) բառերի գեղազարդական հատկանիշի ապահովմանը՝ նպաստելով նրանց դյուրահիշելությանը: Նշենք, որ այդ բառերում պայմանականությունը չպետք է խանգար

⁸ Մինիստրությունների ու վարչությունների անունների հապավումները սովորաբար գործածվում են համապատասխան հանրապետության կամ պետության անվան հետ միասին:

րի բառիմաստի հասկանալիությանը: Քանի որ պայմանականության սկզբունքը ոչ թե գործում է ինքն իրեն, այլ հատուկ կիրառվում է բառակազմության և մասնավորապես տերմինակազմության ընթացքում, ուստի անհրաժեշտ է հաշվի առնել այս բոլոր պահանջներն ու պայմանները:

Ժամանակակից հայերենի բառակազմության մեջ գնալով ավելի է ընդլայնվում մի միտում, որը կարելի է համարել նախորդ միտումին հակադիր երևույթ: Եթե պայմանականության միտումի դեպքում բառակազմական հիմքը ղեկավարում է տարբեր չափով, ապա այս դեպքում ոչ թե մեկ բառը, այլ միանգամից ամբողջ բառակազմությունը կամ բաղադրյալ անունն է դառնում ածանցավոր բառի հիմք՝ սովորաբար առանց բաղադրիչների փոփոխության, ընդհուպ մինչև քերականական վերջավորության պահպանումը: Օրինակ՝ ֆարի դար+յան՝ ֆարիդարյան, կարմիր բանակ+ային՝ կարմիրբանակային և այլն:

Ածանցման մեջ որպես բառակազմական բաղադրյալ հիմքեր կարող են հանդես գալ՝

ա) Բաղադրյալ հատուկ անունները. ինչպես՝ Նոր Նախիջևան+ցի՝ նորնախիջևանցի, Նյու Յորք+ցի՝ նյույորքցի, Նոր Զելանդիա+ցի՝ նորզելանդացի, Սիբիր Ասիա+ական՝ սիբիրասիական, Մերձավոր Արևելք+յան՝ մերձավորարևելյան և այլն.

բ) Թվականի ու գոյականի կապակցությունը՝ չորս հարկ+անի՝ չորսհարկանի, վեց օր+յակ՝ վեցօրյակ, հինգ թև+անի՝ հինգթևանի, հինգ ռուբլի+անոց՝ հինգռուբլիանոց, ֆանհինգ ռուբլի+անոց՝ ֆանհինգռուբլիանոց⁹, տասներկու մատ+յա՝ տասներկումատյա, ֆան ամ+յա՝ ֆանամյա, տասն ամ+յակ¹⁰, տասնամյակ:

գ) Ածականի և գոյականի կապակցությունը. ինչպես՝ օտար լեզու+յա՝ օտարլեզվյա, երկար օր+յա՝ երկարօրյա, հին օր+յա՝ հնօրյա, նոր օր+յա՝ հնօրյա, ոսկե դար+յան՝ ոսկեդարյան.

դ) Բաղադրյալ թվականները. ինչպես՝ ֆանհինգ հազար+ական՝ ֆանհինգհազարական¹¹, հինգ հազար+ական՝ հինգհազարական¹², հարյուր մեկ+երորդ՝ հարյուրմեկերորդ.

ե) Դերանվան և գոյականի կապակցությունը. ինչպես՝ այլ երկիր+ացի՝ այլերկրացի, ամեն օր+յա՝ ամենօրյա, ամեն ամ+յա՝ ամենամյա.

զ) Երկու գոյականների կապակցությունը. ըստ որում առաջին գոյականը կարող է լինել թեք կամ ուղիղ ձևով. օրինակ՝ իսսֆի մաս+ային՝ իսսֆիմասային, տոն օր+յա՝ տոնօրյա, շաբաթ օր+յակ՝ շաբաթօրյակ և այլն:

Բառակազմական ու հարադրական հիմքերով կազմված ածանցավոր բառերի վերաբերյալ պետք է նկատի ունենալ հետևյալը.

⁹ Այլ է ֆանհինգ ռուբլիանոց, որ նշանակում է «քսանհինգ հատ մեկ ռուբլիանոց»:

¹⁰ Բառակազմության երկրորդ բաղադրիչն է տարի. բայց քանի որ նման դեպքերում պատմականորեն հանդես է եկել ամ բաղադրիչը, այդ պատճառով ժամանակակից կազմություններում ևս գործածվում է ամ-ը:

¹¹ Համկ(բ)կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումի որոշումով կոլեկտիվացմանն օգնելու նպատակով գյուղ ուղարկված բանվորների ջոկատը:

¹² Կոլտնտեսության փառաբանված հինգհազարականն ընտրվեց համագումարի պատգամավոր (ՄՀ): Հինգհազարական—անձ, որի աշխատանքի արդյունքը որոշվում է 5000 միավորով. բերված օրինակում՝ անձ, որի խնամած կովերի միջին կաթնատվությունը 5000 լիտր է:

ա) Սովորաբար դրանք կազմվում են հիմքի բաղադրիչների ամբողջական կազմի պահպանումով, այդ բաղադրիչների կցման եղանակով. տե՛ս վերք բերված օրինակների ճնշող մասը. *ինչպես՝ կարմիրբանակային* (հմմտ. *կարմիրադրոշ, կարմրագույն*), *խոսքիմասային* (հմմտ. *խոսքակոխ*), *հինգթևանի* (հմմտ. *հնգաթև*), *փանհինգանոց* (հմմտ. *հնգանոց*), *միջինասիական* (հմմտ. *միջնադար, միջնաբերդ*):

բ) Որոշ դեպքերում հիմքի բաղադրիչների մեջ կատարվում են հնչյունափոխական երևույթներ, որոնք առավելապես պատմական բնույթ ունեն կամ կատարվում են պատմականի հետևությունով: Օրինակ՝ *երկհարկանի, երկփեղկանի, եռօրյա, հնգօրյակ: Չորհոտանի-ն* (հմմտ. *չորսականի, չորսհարկանի, որոնք նոր են*) հին կազմություն է:

Վերջին շրջանում ավելի է որոշակիանում բառերի գլխավոր ու երկրորդական շեշտերի տարբերակումը: Ինչ խոսք, գլխավոր ու երկրորդական շեշտերի տարբերակումը եղել է նաև անցյալում՝ հատկապես որոշ կարգի բաղադրյալ բառերի մեջ, բայց շեշտերի այդ տարբերակումը և հատկապես երկրորդական շեշտերի որոշակիացումը ավելի ակնհայտ են դառնում ներկա փուլում՝ կապված նոր կազմությունների հետ, որոնց մասին խոսվեց վերք:

Երկրորդական շեշտի դրսևորման յուրահատկության տեսակետից էական է այն հանգամանքը, թե ինչպիսին է բառի կազմությունը: Նախ նշենք, որ երկրորդական ու գլխավոր շեշտերը առավել որոշակի տարբերակվում են բարդ բառերում: Բարդ բառերի մեջ նշված տեսակետից տարբերվում է կազմության ձևավորման եղանակը (հարադրական, համադրական): Հարադրական կազմություններում երկրորդական շեշտը բավականին զգալի է: Հմմտ. *ալյուր-նուշարձա՛ն, մսե՛ր-մանկապարսե՛զ, տո՛ւն-քանգարա՛ն, վագ՛ոն-ռետորա՛ն* և այլն: Ինչ վերաբերում է համադրական կազմությանը համադրական բարդ բառերին, ապա սրանց երկրորդական շեշտը ավելի թույլ է, քան հիշյալ բառերինը, բայց և այնպես զգալի է այլ դեպքերի համեմատությամբ: Հմմտ. *ժողովուրդադեմոկրատական, ուսումնադատարական, գաղափարադաստիարակչական, հրեհնամիջուկային* և այլն: Երկրորդ շեշտի որոշակի դրսևորման տեսակետից միջին դիրք է գրավում բառակապակցական հիմքով կազմված բառերի առաջին բաղադրիչի շեշտը: Ըստ երևույթին այստեղ դեր է կատարում բառակապակցության բաղադրիչների միացման կցական եղանակը, որի դեպքում ձևային ինքնուրույնության պահպանման պայմաններում իր որոշ ինքնուրույնություն է պահպանում նաև առաջին բաղադրիչի շեշտը, բայց արդեն որպես ամբողջ բաղադրության երկրորդական շեշտ: Հմմտ. *սպիտակ-գլարդիական, մերձավորարևելյան, տասներկուամսյա, փանհինգոթյալիանո՛ց* և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ այս և նման դեպքերում երկրորդական շեշտի ուժգնության հարցում դեր կատարում է նաև առաջին բաղադրիչի հնչյունափոխական կազմը: Կարելի է ասել այսպես. որքան մեծ է տվյալ բաղադրիչը հնչյունական կազմով, այնքան նրա շեշտը ավելի ուժեղ է, և, ընդհակառակն, որքան բաղադրիչը սակավահնչյուն է, շեշտն այնքան թույլ է լինում: Դա կարող է զգացվել վերոհիշյալ բառերի հետ հետևյալ կազմությունների համեմատությամբ. *գլխահետադուրական, նյութատեխնիկական: Անշուշտ, երկրորդական շեշտի դրսևորման հարցում որոշ դեր կատարում է նաև տվյալ բաղադրյալ բառի հնչյունական աստիճանը, գործածության հաճախականությունը. որքան բա-*

դադրիչներն արտասանական տեսակետից սերտ են, այնքան երկրորդական շեշտը կարող է թույլ արտասանվել: Սակայն այս երկու գործոններից ավելի մեծ դեր կատարում է բաղադրիչների ծավալը: Այսպես, լեզվագրական և ֆիզիկամաթեմատիկական բառերն ունեն համարյա հավասար «տարիք», բայց որոշակի տարբերություն կա դրանց երկրորդական շեշտի միջև. ֆիզիկամաթեմատիկական բառի երկրորդական շեշտն զգալիորեն ուժեղ է լեզվագրական բառի երկրորդական շեշտից:

Վերջապես, որպես շեշտի մեջ նոր երևույթ նշենք նաև, որ բառերի մեջ արդեն հանդես է գալիս երրորդ (կամ երկրորդ երկրորդական) շեշտը: Սա վերաբերում է հատկապես բազմարմատ բառերին, որոնց քանակը գնալով ավելի է մեծանում, ինչպես նշվել է վերը: Օրինակ՝ միկրոէմալապատում, զուսմադա-պառնություն, ջերմաէլեկտրական և այլն: Ի՞նչ հարաբերության մեջ են երկու երկրորդական շեշտերն իրար հետ: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս հարցում դեր կատարում է բաղադրության անմիջական բաղադրիչների հարցը: Առավել ուժեղ երկրորդական շեշտը ընկնում է սկզբի անմիջական բաղադրիչի վերջին վանկի վրա, իսկ մյուս երկրորդական շեշտը՝ բազմարմատի հիմքի առաջին բաղադրիչի վրա: Այսպես, միկրոէմալապատում բառի առաջին (կամ ուժեղ) երկրորդական շեշտը ընկնում է միկրո-ի ու-ի վրա, իսկ երկրորդ երկրորդական շեշտը՝ էմալապատում-ի էմալա- բաղադրիչի վրա: Եվ իսկապես, այդ բառի անմիջական բաղադրիչներն են միկրո-էմալապատում:

Բազմաբաղադրիչ կազմություններում բառի երկրորդական շեշտի (շեշտերի) և գլխավոր շեշտի փոխհարաբերության, ինչպես և երկրորդական շեշտի (շեշտերի) կապը բառակազմության ու բառի հնչյունական կազմի տարբեր բնույթների հետ արժե դարձնել փորձարարական քննության առարկա:

Բառակազմության մեջ նկատվող մյուս միտումը վերաբերում է բառի ածմանը դիրքային տեսակետից: Հայտնի է, որ հայերենում բառի ածումը հատկապես բառակազմական ձևությամբ կատարվում է վերջից: Դա արտահայտվում է նրանով, որ հայերենում վերջածանցներն ավելի շատ են ու ավելի գործուն, քան նախածանցները: Թեև նախածանցման ու վերջածանցման այս հարաբերությունը պահպանվում է նաև այժմ, այնուամենայնիվ նկատելի է, որ ժամանակակից հայերենի բառի ածման գործում բառասկզբի դիրքը բավականին ակտիվանում է: Բառի կառուցվածքի մեջ կատարվող այս տեղաշարժի մեջ իր որոշակի ազդեցությունն ունեն ռուսաց լեզվի այն մեծաքանակ բառերի ու մասնավորապես տերմինների թարգմանությունը և հատկապես պատճենումը, որոնք ռուսերենում կազմվում են նախածանցներով:

Բառի ածումը ձախից ակտիվանում է հիմնականում հետևյալ միջոցներով.

ա) Մեծ չափով ակտիվանում են հայերենի նախածանցները՝ արտ-, գեր-, էնթա-, համա-, հակա-, մակ-, ներ-, փոխ-, որոնցով կազմվել են հազարավոր բառեր: Օրինակ՝ արտալլանային, արտակենտրոն, արտառանցք. գերածախս, գերարագ, գերկար, գերհզոր, գերձայնային, գերնուրբ. ենթակայան, ենթամաշկ, ենթասպա. համակառույց, համահունչ, համայց, համանախագահ. հակաքիռոտիկ, հակագագ, հակադույթ, հակաթույն, հակատանկային, հակաօդային. ներան, ներդիտակ, ներատումային, ներգոնդում, ներհատիչ, ներտաշ և այլն:

Առանձին նախածանցների բառակազմական ակտիվությանը նպաստում է հատկապես այն հանգամանքը, որ ռուսերենի տարբեր նախածանցավոր բա-

ոների իմաստները հայերենում հաճախ ձևավորվում են մեկ ածանցով: Այսպես, փոխ- նախածանցով ձևավորվում են *взаимо-, контр-, под-, вице-, пере-* նախածանցներով կազմված շատ բառերի համարժեքները: Ինչպես՝ *փոխշահավետ* (*взаимовыгодный*), *փոխծովակալ* (*контр-адмирал*), *փոխգնդապետ* (*подполковник*), *փոխ-պրեզիդենտ* (*вице-президент*), *փոխհրաձգություն* (*перестрелка*): Ըստ որում սա բացառիկ երևույթ է: Այն վերարերում է նաև *հալա-, գեր-, նախ-* և այլ ածանցներով կազմություններին ու դրանց ուսուսերեն համարժեքներին: Ինչպես՝ *հակահարձակում* (*контрнаступление*), *հակադրույթ* (*антитезис*), *հակագազ* (*противогаз*), *գերակատարում* (*перевыполнение*), *գերկարճ* (*ультракороткий*), *գերհզոր* (*сверхмощный*) և այլն:

բ) Երբեմն ուսուսերենի նախածանցավոր կազմությունը նպաստում է հայերենի որոշ նախդիրների բառակազմական գործունեությանը: Այսպես, հայերենի առ նախդրի բառակազմական դերը վերջին շրջանում զգալիորեն մեծացել է ուսուս լեզվի համապատասխան կազմությունների ազդեցությամբ: Ինչպես՝ *առբախում* (*выстукивание*, *перкуссия*), *առդիր* (*приложение*), *առմբրոնում* (*апперцепция*), *առճակատում* (*конфронтация*):

3) Հայերենի որոշ բառեր՝ *մեղձ, միճ, հետ* (*հմտ. հտ, հետո*) և այլն, որպես բառակազմական նախադաս հիմքեր են գործածվում ուսուսերենի իմաստային համարժեքների (*при, до, после*) նմանությամբ: Օրինակ՝ *Մերձբալթիկա* (*Прибалтика*), *մերձվոլգյան* (*приволжский*), *մինչպատերազմյան* (*довоенный*), *մինչհոկտեմբերյան* (*дооктябрьский*), *հետպատերազմյան* (*послевоенный*), *հետճաշյա* (*послеобеденный*) և այլն:

Հայոց լեզվի բառակազմական օրինաչափությունների ծավալման յուրահատկությունների ու միտումների տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում այն երևույթը, թե այլլեզվյան հասկացությունները բառակազմական ինչեղանակով են արտահայտվում հայերենում: Այդ հասկացությունների հայերեն արտահայտման հիմնական եղանակը եղել է և մնում է պատճենումը: Պատճենումը գալիս է դեռևս մեր գրավոր լեզվի ամենավաղ շրջանից. առաջին պատճենումները կատարվել են հունարենից՝ թարգմանությունների ժամանակ: Պատճենումը, սակայն, մեծ ծավալ ու թափ ստացավ հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում՝ սկսած հենց առաջին տասնամյակից: Հմտ. եղում (*ревком*), *գյուղխորհուրդ* (*сельсовет*), *կոլտնտեսական* (*колхозник*), *քաղխմբակ* (*политкружок*), *լուսժողով* (*наркомпрос*) և այլն:

Պատճենումը սովետական շրջանում ընդլայնեց իր սահմանները: Պատճենվում են՝ ա) բառը բառով. *ինքնաթափ* (*самосвал*), *տնտհաշվարկ* (*хозрасчет*), *հեռուստահաղորդում* (*телепередача*). բ) բառակապակցությունը բառով. *պահստանակ* (*камера хранения*), *գրապալատ* (*книжная палата*). գ) բառակապակցությունը բառակապակցությամբ. *Ժողովրդական դատարան* (*народный суд*), *պետական մրցանակի դափնեկիր* (*лауреат государственной премии*) և այլն:

Պատճենումների շնորհիվ առավել ակտիվացան հայերենի բառակազմական որոշ միջոցներ, որոնք հարմար են ուսուսերենի կամ այլ լեզվի համապատասխան բառի իմաստը ճշգրտորեն արտահայտելու համար: Պատճենումները շարունակում են այժմ էլ հարստացնել հայոց լեզվի բառապաշարը:

Սակայն վերջին շրջանում նկատվում է մի միտում. որոշ պատճենումներ

փոխարինվում են նոր կազմություններով, որոնք ավելի կարճ են ու մատչելի և ավելի դիպուկ են արտահայտում տվյալ իմաստը, քան պատճենումը, և այս միտումով պայմանավորված՝ այլևզվյալ հասկացության իմաստը հայերենում այժմ շատ դեպքերում արտահայտվում է ազատ թարգմանությամբ: Այսպես, перигей և апогей բառերը պատճենվեցին երկրամեծ և երկրահեռ բառերով: Որքան էլ այս բառերը, թվում է, բառակազմական բաղադրիչների տեսակետից ճշգրիտ են ներկայացնում թարգմանվող տերմինը, այնուամենայնիվ ստացված արդյունքը նույնանիշ չէ թարգմանվողին: Թարգմանված գոյականների դիմաց հայերենում ստացվել են ածականներ: Կատարվեց ոչ բառացի թարգմանություն, և ստեղծվեցին մեծակետ ու հեռակետ բառերը, որոնք հաջողությամբ գործածվում են перигей ու апогей իմաստներով: Այս կազմություններում չկա երկիր բաղադրիչի իմաստը (гея): Դա էլ հենց այդ բառերին հնարավորություն կտա գործածվելու ավելի ընդհանրական իմաստով. արտահայտելու տարածական հարաբերություն ոչ միայն երկրի, այլև անհրաժեշտության դեպքում մի այլ մոլորակի կամ երկնային մարմնի նկատմամբ:

Фигурное катание մարզական տերմինը պատճենվել էր հայերենում ձևավոր չմշակասանք համարժեքով: Կապակցությամբ արտահայտված այս տերմինը վերջին տարիներին փոխարինվեց մեկ բառով՝ գեղասանք, որը կարճ է, գեղեցիկ, մատչելի և հեշտ է մտնում բառակազմության մեջ. գեղասանորդ, գեղասանել և այլն: Մի ժամանակ досрочно բառը պատճենել էին նախաձամկետ ձևով, որը չտարածվեց, և այդ իմաստը հայերենում արտահայտվում է պարզապես հայերեն ժամկետից շուտ հասկանալի կապակցությամբ:

Այս նոր միտումի արտահայտություն է այն երևույթը, որ ա) այլևզվյալ հասկացությունները այժմ հաճախ միանգամից ոչ թե պատճենվում են, այլ ազատ թարգմանվում են, կամ բ) փոխառյալ շատ բառեր այժմ արտահայտվում են հայերենի կազմություններով: Օրինակ՝ ա) КОНТРАЙКА—պնդողակ, рецепт—բաղադրատոմս, МИНУТКА—ճեպաժողով և այլն, բ) ինտերվյու—հարցազրույց, ստարտ—մեկնարկ, ռեյդ—ստուգայց և այլն:

Ամփոփենք. հայոց լեզվի բառակազմական օրինաչափությունները, իրենց հարաբերական կայունությամբ հանդերձ, համեմատաբար կարճ ժամանակաշրջանում հանդես են բերել զարգացման որոշակի միտումներ: Այս միտումները ընդհանուր առմամբ ոչ թե փոխարինում են հայերենի բառակազմական օրինաչափությունները, այլ հարստացնում են դրանք. ծավալում են կամ լրացնում: Ուշագրավ է, որ բառակազմության զարգացման այս նոր միտումները ընդգրկում են հիմնականում տերմինաբանության բնագավառը: Սա այն բանի արտահայտություն է, որ ժամանակակից հայերենի բառապաշարը հարստանում է առավելապես տերմինաբանության հաշվին: Այս իրողությունը պայմանավորված է արտալեզվական այնպիսի հանգամանքով, ինչպիսին է մեր հասարակական կյանքի, գիտության, տեխնիկայի, մշակույթի տարբեր բնագավառների աննախադեպ զարգացումը և այս ամենը լեզվականորեն սպասարկելու անհրաժեշտությունն ու պահանջը: Այս բոլորը հիմք ու ազդակ են դառնում գործնական ոճերի և մասնավորապես նրանց բառապաշարի հարստացմանն ու զարգացմանը: Սա նշանակում է, որ արտալեզվական գործոնները ոչ միայն ուղղակիորեն ազդում են լեզվի բառապաշարի հարստացման վրա, այլև անուղղակիորեն նպաստում են լեզվի բառակազմական օրինաչափությունների զարգացմանը:

Համեմատությունները ցույց են տալիս, որ ժամանակակից հայերենի բառակազմության զարգացման ժամանակակից շատ միտումներ ավել կամ պակաս չափով, այս պահին այն յուրահատկությամբ տեղ են դնում նաև այլ լեզուներում: Լեզուների բառապաշարի, այդ թվում և բառակազմական կաղապարների զարգացման արդի փուլում առաջանում են բառակազմական (բառակազմական կաղապարի, բառակազմական նշանակության, բառի ներքին ձևի) հանրույթներ (ունիվերսալիա): Դա բացատրվում է, մի կողմից, տարբեր լեզուների զարգացման համանման պահանջներով, համանման արտալեզվական հանգամանքներով, մյուս կողմից, լեզուների և մասնավորապես տերմինաբանության փոխազդեցություններով: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ ընդհանուր պայմաններում զարգացող ամեն մի լեզու, տվյալ դեպքում հայոց լեզուն, այդ համանման պահանջներին արձագանքում է յուրովի, իր լեզվական առաջին համապատասխան, իր բառակազմական օրինաչափությունների պրիզմայով անցկացնելով ամեն մի ընդհանուր պահանջ, էլանքով նշելով ու ծավալելով իր ներքին հնարավորությունները:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫХ ЗАКОНОМЕРНОСТЕЙ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Доктор филол. наук С. Г. АБРААМЯН

(Резюме)

В статье сделана попытка исследовать тенденции развития словообразовательных закономерностей армянского языка за последние десятилетия. Все словообразовательные конструкции разделены на две группы: а) транспозиционные (когда словосочетание или словоформа превращается в самостоятельную лексическую единицу) и б) модельные (когда слово может быть в любой момент образовано на основе существующей модели). За последние десятилетия более активизировался второй способ, предоставляющий говорящему действовать с максимальной активностью, и стал более пассивным первый, почти полностью оказавшийся вне сферы активного воздействия говорящего. Получают широкое распространение новые типы сложных слов с сочинительным отношением, как аналитические, так и синтетические, а также конструкции, образованные посредством трех или четырех корней. Заметно активизируется рост слова слева (с начала) по аналогии с соответствующими конструкциями русского языка. В связи с необходимостью ограничения объема новообразуемого слова действует принцип условности, по которому в этом слове в качестве компонента выступает один «представитель» словосочетания или один компонент многокомпонентного слова: напр., *ռադիոաստղագիտություն* (радиоастрономия). Эти и другие тенденции охватывают преимущественно терминологию, за счет которой в основном и обогащается словарный состав современного армянского языка. В статье показана роль экстралингвистических факторов в развитии словообразовательных закономерностей.